

ՀԱՅՔ

Հ Ա Ն Դ Է Ս

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAİK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D.

New York, N. Y. Vol. IV, 1894

ՀԱՅՔԻ ՆՈՐ ՀԱՍՏԷՆ Է
139 West 22nd St. New York

ԲՈՎԼՆԵԴԵԿՈՒԹԻՒՆ

Պահպանողական, Ազատական, Արմատական Կուսակցութիւնք և Եկեղեցի.— Ամբիջանական.— Նամակ Բամտարկելոյն. Թուրքիոյ Փտուղիւն.— Հայկական Խնդիրն. Ա. Ի Ռուսիա.— Ամիրաբանութիւն Հայոց(°)— Ամերիկայի Հայոց Պատիւն.— Նուիրատուութիւնք.— Տեղական և այլ և այլ Լսւոքն:

—Բանտարկութիւն կրած Հայուն նամակըն զոր կը սկսիմք հրատարակել ներկայ թուով վերջին տատիճան հետաքրքրական և ուշագրաւ է:

—«Հայկական Խնդիրն» խորագրով յօդուածն երկար և յոյժ կարեւոր ուսումնասիրութիւն մ'է Գոնթէմփարէրի Րիվիուի մէջ հրատարակուած, գեռ շարունակելի: Մեք ամփոփած կուտամք թարգմանութիւնն: Յուլիսի թուոյն մէջ պիտի երևի երկրորդ մասն հանդերձ եղրակացութեամբք:

—Մեր խորին շնորհակալութիւնն կը մատուցանեմք ինպատ շնորհակալութեան հանգանակող Հայրենակցաց ամենուն և իւրաքանչիւրին: Նուիրատուու

թեանց ցանկէն պիտի տեսնուի թէ քիչ-չոր չեն համակրողք, բայց մեծ մասամբ գործաւորներ են և իրենց առատ նուէրներու գումարն մինչև այսօր չատ անբաւական է: Սակայն այլ և այլ կողմերէ խոստումներ եղած են և յոյսեր տրուած, և կը յուսամք թէ երկմտողներն ևս պիտի շարժին իրենց ընկերներու օրինակէն քաջալերուած: Մեք այժմ բաւական վստահեմք թէ օգնութիւնք պիտի բաւեն գէթ իբրեւ ամսօրեայ շարունակելու ՀԱՅՔԻն ցվերջ ներկայ տարւոյս: Աւելորդ չի լինիր հետաքրքիրներու ծանուցանել թէ Հայքի՝ իբրեւ կիսամսեայ թերթի՝ կանոնաւոր հրատարակութիւնն տարեկան իբր 2,000 տողարի կարօտ է, օգնական խմբագրի, գրաշարի, վարձքի, թղթի, տպագրութեան, փողի, տառերու, ուղեորութեան և այլ ծախուց համար:

—Խրիմեան Հայրիկի նորընծայ գիրքն, ՊԱՊԻԿ և ԹՈՌՆԻԿ, ըստ վկայութեան մամլոյն, ամբողջ Հայ շինական ժողովրդի մատչելի և շինիչ աշխատասիրութիւն մ'է իմաստալից և պարզ միանգամայն: Այդ գիրքն ճշմարիտ պարգեւ մ'է Հայ շինականին, զի Հայ գիւղացւոյ կեանքին ու վիճակին հետ մտերիմ ծանօթութեամբ գրուած է, և չի նմանիր օտարամիտ և թարգմանեալ կարգմի հրատարակութեանց որովք ոմանք կը ջանան ողողել և ապականել Հայ հանրային միտքն:

ՊԵՇՊԵՆՈՂԱԿԱՆ, ԱԶԱՏԱԿԱՆ, ԱՐՄԱՏԱԿԱՆ

ԿՈՒԱՍԿՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

Հայ նորածին աղգային-քաղաքական խորհուրդն կուսակցական եւս քան գեւորոշ գոյներ կ'առնու: Շնորհիւ ծագման ազատական կուսակցութեան՝ երկու ուրիշ կուսակցութիւններ ևս կերպաւորեցան՝ արմատական և պահպանողական: Ցոր-չափ ընդհանուր թմրութիւն կը տիրէր, ժողովուրդն ամբողջ մ'էր անկերպ, բայց յորմէ հետէ փոքր մասն սկսած է շարժիլ, մեծամասնութիւնն պահպանողական կը կոչուի, և կը պարունակէ հնամոլներն, թրքասէրներն, անտարբերներն և Մամոնայի ծառայքն: Ծառայ են դոքա բոլոր, աւանդութեան լուծն և անցելոյ կապանքը կրող գերիներ: Ըստ նոցա ինչ որ եղած է արդէն, պէտք է շարունակել, իսկ ինչ որ նոր է, այնու իսկ զի նոր է, փնասակար է և մերժելի:

Ազատականք յառաջդիմութեան հաւատացեալքն են: անձանձիր ջանադրութեամբ յաղթեցին նոքա պահպանողականաց կոյր գիմակալութեան և կրթեցին երկսեռ մանկտին, նորոգեցին հայ լեզուն, քանդեցին վատառողջ սովորութիւններ, սափրչի տեղ բժիշկ, տիրացուի տեղ ուսուցիչ, նարեկի տեղ ընթերցարան, թաղնայի տեղ թեթեւ գլխանոց հանեցին երեւան: Համարձակեցան մինչեւ իսկ մտածել թէ հայ ժողովուրդն պարտաւոր է թրքաց բռնապետութեան լուծն կրել յաւիտեան, թէպէտ պահպանողականք հայեցան իրենց իրրեւ բանդագուշողաց:

Ազատականաց շնորհիւ նաև արմատականք կ'առնուն ծագումն: Արմատականք կը տարբերին յազատականաց այնու զի կ'ուզեն իրադործել իսկոյն մեծամեծ փոփոխութիւններ, ոստմամբ հասնիլ յառաջագէմ վիճակի, արմատախիլ անել ինչ որ անցեալէն աւանդուած է, և հաստատել նորն ի նորոյ, ոչ թէ համբերատար աշխատութեամբ աստիճանաբար բարեփոխել, զարգացունել հինն, որպէս կ'ուզէ ազատականն: Պահպանողականք հինն կը յարգեն վասն զի հին է, արմատականք

հինն կը հերքեն վասն զի հին է, ազատականք կ'ուզեն ազատ լինիլ մերժելու ինչ որ յուր է, և որդեգրելու ինչ որ լաւ է, փոյթ չէ թէ հին լինի կամ նոր: Նոքա կը ճանաչեն թէ յառաջդիմութեան մեծ օրէնքն է շրջափոխութիւն (evolution), ոչ թէ յեղափոխութիւն (revolution), և միայն ա'յն յեղափոխութեան կը հաւատան որ շրջափոխութեան շնորհիւ պատրաստուած հասունացած կը լինի: Անցեալն, ըստ նոցա, է արմատն, ներկայն՝ բունն, ապագայն՝ պտուղն: Երմարութիւն կը լինի ներկայն բաժնել անցեալէն, բունն կտրել արմատէն: զի այդու ապագայի պտուղն կը վիժի: Արմատականն, չյարգելով այդ բնական կապակցութիւնն, չարունակ յանդուզն ծրագրիներ կը հսնէ իրրեւ ինքթ ու խութ յառաջդիմականաց քայլերուն առջեւ:

Ազատականաց և արմատականաց մէջ վէճի փափկագոյն նիւթերէն մին է եկեղեցւոյ խնդիրն: Ազատականն կը ճանաչէ թէ եկեղեցին ալ կարեւոր դեր ունի քաղաքական խնդրոց մէջ: Ահաւանիկ Պուլկարիա և Սերպիա օրինակ, որ ազգային եկեղեցի չունին այլ օրթոտոքս եկեղեցւոյ զաւակ են: Հոն ազատականք կ'աշխատին զարգացունել ազգային գիտակցութիւնն, որպէս զի եկեղեցականին փոխան ազգային իտէականն լինի հանրային զգացման կեդրոն և աղբիւր: Թուսիս միւս կողմէն կը բաղձայ որ սերպ և պուլկար ժողովուրդք մնան կրօնամոլ, կղերապաշտ, այսինքն օրթոտոքս եկեղեցւոյ հոգեւոր գերի, որպէս զի օր մի կարելի լինի զիրենք ընկղմել և մարսել սլաւութեան մէջ: Սերպ և յոյն ժողովրդոց համար, ուրեմն, եկեղեցին յուստ վտանգ մ'է քաղաքական, որոյ դէմ կը ջանան ազատականք պաշտպանել զնոսա իմաստնօրէն: Հայ եկեղեցին, ընդհակառակն, գոլով ոչկաթոլիկ և ոչ օրթոտոքս, պաշտպանութիւն մ'է հայ ազգութեան, ձուլման դէմ ապահովող պայման մի: Պէտք է, կ'ասէ հայ ազատականն, յարգել և կանգուն պահել հայ եկեղեցին, լաւագոյն կղերներ պատրաստելով բարձրացունել մեր եկեղեցականաց վարկն, սակաւաթիւ արժանաւորաց արժանիքն հռչակել, հարուածելով հանդերձ, ի դէպ ժամու, այն վաստ եկեղեցականներն որք անպատուութիւն են եկեղեցւոյն: Ի մի բան, ազատականաց փա-

փաթե՛ն է աստի պահպանել եկեղեցին ու ազնուացունել եկեղեցականն, անտի՛ հայ ժողովուրդն «տիրացու» ազգ լինելէ ազատել՝ ներշնչելով նմա ազգային խոհականներն:

Արմատականաց քաղաքականութիւնն շատ տարբեր է այդ մասին: Նոքա կ'ուզեն իսկոյն, փութով բարձրացունել հայ ժողովուրդն վեհ (ըստ իւրեանց կարծեաց վեհ՝) ընկերվարական կամ անխլանական խոհականի, և որպէս զի բարձրացունեն՝ կ'ուզեն կղերական ազգեցութիւնն իբրև արգելք խորտակել: Այդ նպատակաւ ալ կ'աշխատին քան զամենայն լուսամիտ և յառաջդիմաւոր համբաւուած եկեղեցականի մի յիշմամբ անունն ոչնչացունել, ոչ յանձնակամ հակառակութենէ մղեալ, այլ առ ի հաստատել թէ չիք և ոչ մի կղեր յարգելի, և թէ կղերի բուն կոչման մէջ կայ բան մի որ զնա անընդունակ կը գործէ: Ըստ նոցա եկեղեցին փտած հաստատութիւն մ'է, և կղերն զայլոցկերութեամբ զբաղող աւելորդ արարած. ուրեմն հարկ է որ ժողովուրդն գիտնայ գայդ և խորտակէ եկեղեցւոյ լուծն:

Այն խնդիրն թէ կրօնն և եկեղեցին ինչ ծառայութիւն մատուցած են ազգաց կամ ինչ դեր կատարած են քաղաքակրթութեան մէջ, և թէ ապագայն անկրօն և անեկեղեցի պիտի լինի՞ արդեօք — մեր յօդուածի սահմանէն դուրս է: Մեր տեսակետն զուտ ազգային-քաղաքական է աստ, և ուստի կ'առնեմք թէ մեր արմատականաց կացքն հանդէպ հայ եկեղեցւոյն հակառակ է ողջամիտ քաղաքականութեան: Մի քանի յօդուածով կարելի է ազդել մի քանի երիտասարդաց, բայց հայ ժողովրդի մեծ զանգուածն եկեղեցւոյ քաղաքական դերին դեռ կարօտ է և դեռ երկար ատեն կարօտ պիտի մնայ, նոյն իսկ ինքնօրինութեամբ օժտուելէ յետոյ, վասն զի բոլորովին ազգային խոհականով կառավարուելու համար պէտք է որ միջանի սերունդներ անցնին հայկական ճշմարիտ գասախարակութեան և քաղաքային կրթութեան ներքե: Զգացում մի մեռցունել այնքան դիւրին չէ որքան մարդ մեռցունել... Մի՛ աճապարէք ուրեմն հինն ջնջել մինչդեռ նորն չէ ի միջի:

Ոմանք կը թուին կարծել թէ Հայաստանի փրկութիւնն պարզապէս օսմանն ան զեղծ վարչութեան լծէն ազատիլ և ինք-

նօրէն հռչակուիլ է: Յոյժ թերի գաղափար է այդ: Եւրոպա կրնայ մի օր միջամտել. Ռուսիա կրնայ մի օր անել յօդուա Հայաստանի բարերար ձեռնտուութիւն, կրնան պետութիւնք ինքնօրէն հռչակել զմեզ, բայց ինքնօրէն անել չեն կրնար: Ինքնօրէն չեն դեռ, բառին բուն մտքն, Պուլկարիա և Սերպիս, այլ կը կրթուին լինելու: Հայաստան ևս ինքնօրէն հռչակուած օրն ինքնօրէն չպիտի լինի, այլ դեռ երկար տարինք պիտի դատախարակուի քաղաքական դատախարակութեամբ, պիտի վարժուի ինքզինք վարելու մեծ և դժուարին արուեստին: Եթէ չյաջողի ինքզինք վարելու փորձին մէջ, ինքնավարութեան արտօնութիւնն պիտի կորուսանէ: Ահա Պուլկարիա և այլքն մեզ օրինակ: Պուլկարիա դեռ ճշմարտիւ ինքնօրէն չէ. և իւր վտանգաւոր մանկութիւնն ապահով անցոյց Սթամպուլոֆի գրեթէ միապետական վարչութեան շնորհիւ:

Մեր մէջ ալ ազգային գործիչք պարտին Հայաստանի ապագայ դժուարութիւններն այժմէն հաշուի առնուլ, և զգուշանալ չիցէ՞ թէ իրենց անխոհեմութեամբ վայրապար աճեցունեն ապագայի դժուարութիւններն, կամ ուժի տարր լինելիք գաղափարներն քայքայման պատճառներու փոխեն վաղաժամ սերմանելով զայնս:

ԱՆԻՇԽԱՆԱԿԱՆՔ

Ֆռանսայի համակրելի նախագահն զՔառնոյ անխլանական մի դաշունեց յանկարծ Յունիս 24ին, աղերագիր մատուցանելու պատրուակաւ կառքին մօտենալով: Ոճրագործն 21 տարեկան է բայց ունի իւր խորին համոզումն ինչպէս ամենայն անխլանականք ունին: Դոցա համոզմամբ աշխարհի բոլոր շարեաց աղբիւրն է կառավարութիւնն, և ուստի պէտք է բառնալ ի միջոյ ամենայն կառավարութիւն իւր զանազան ձևերով: Եւ կառավարութիւնն ջնջելու համար կը ջանան իշխաններ, կառավարողներ և կառավարութեան կարեւորութիւն ընծայող քաղաքացիներ սպաննել և զարհուրեցուցանել բովանդակ ընկերութիւնն: Այս ոճրագործներն գործնական և ապուշ հեռանդներ են կարգ մի կէս-իմաստուն, հպարտ հեղինակներու, որք կառավարութեան ու ընկերային կազմաւորութեան հիմն ախտաւոր սրամտութեամբ քննադատած են: Գրողներ շատ չա՛տ զգոյշ լինելու են թէ ի՛նչ կը գրեն, զի իրենց գրութիւններ, իրենց մի քանի տողեր կրնան ահաւոր խռովութեանց և քուտմեկի եղեռնագործութեանց աղբիւր դառնալ, թէ՛ ուզեն գրողքն և թէ՛ ոչ:

ՆԵՄԵԿ ԲԵՆՏԵՐԿԵԼՈՅՆ

ԹՈՒՐԲԻՈՅ ՓՏՈՒԹԻՒՆՆ

Թուրքիա, 1 Մայիս, 1894

Տէր Խմբագիր ՀԱՅՔԻ, ի նիւ Եսրբ,

Ես յօգուածագիրս՝ իբրեւ թրքահայատակ՝ կը կարծէի թէ թուրք կառավարութեան զեղծումներն կատարելապէս սերտած էի, բայց երբ իբրեւ յեղափոխական կասկածեալ՝ բանտարկուելու դժբաղդութիւնն ունեցայ, համոզուեցայ թէ այս վարչութեան փոռած փոքրութիւնն զննելու համար մարդ պէտք է կուլ տրուի և բանտին խորերն իջնէ։ Բանտին մէջ միայն մարդ առիթ կ'ունենայ ամեն ցեղէ։ Ու կրօնէ անիրաւեալներու բողոքն, հարստահարելոց գանգատն լսել, և հասկանալ թէ նոյն իսկ թուրքն ի՞նչքան ձանձրացած է թրքի տէրութենէն և ո՞րպիսի անձկանօք դէտակն ունի փրկարար փոփոխութեանց։

Հարկ չկայ որ յիշեմ անունն քաղաքին ուր այս փորձառութիւնն ունեցայ։ Իմ ձեռքակալումս տեղի ունեցաւ գիշերայն։ Սոսիկանաց բազմութիւն և պաշտօնականներ յանկարծ հասան ի վերայ, հանեցին զիս անկողնէս և տարին ի բանտ։ Գրքերս, թղթերս առին տարին։ Զիս նետեցին ոճրագործներու շրջանին մէջ, ուր կային Թրքեր, Արաբներ և այլն։ Ոճրագործներն շուրջս առին և սկսան հարցաքննել թէ ինչ էր իմ ոճիրս։ պատասխանեցի թէ ես ինքնս բոլորովին կ'անգիտանայի։ Սկսան ենթադրութիւններ անել։ Նախ և յառաջ իբրեւ ճշմարիտ մահմետական, զրոյց հանեցին թէ սեռական եղբուն գործած էի թուրք բարձր ընտանեաց մէջ։ յետոյ աւելի բանաւոր ենթադրութիւն մի երկնելով արտաբերեցին թէ Մոսկովից թագաւորին գրած եմ որ գայ Տաճկաստանն առնու...։ Առաջին ենթադրութիւնն յղացած էին պաշտօնիս և ընկերային դիրքիս նայելով, երկրորդն՝ հայազգի լինելուս և ուսումնական դասուն պատկանելու համար։ Երկրորդ ենթադրութիւնն զիս բաւական անհաճոյ հանդիսացուց մահմետական բանտարկելոց, որք սկսան ընդ ակամբ հայիլ ինձ։ Ի Սկզբան

բաւական լայն տեղ մի բաժին հանած էին ինձ, ի պատիւ, բայց երբ դառնացան ինձ դէմ, սկսան տեղս նեղել։ Ես ալ հինգնոց մի խթեցի յափն հսկայակազմ Արաբի մի որ հէրքիւլեան ոյժ ունէր, և սա ըսկսու պաշտպան կանգնիլ ինձ, և երեք մահմետական բանտարկիցներուն հետ մրցելով սարսափեցոյց ամենքն, և ստիպեց որ զիւ թողուն հանգիստ։ Ես ալ իմ արար պաշտպանիս խնամ կը տանէի, տալով նմա համեղ կերակուրներէն զորս լաւագին մայրս պատրաստելով կը յղէր ինձ շարունակ և որոնցմէ ճաշակելու իսկ ախորժակ չունէի ես, ա՛յնքան գարշահոտ և զազիր էր բանտըն։ Գիշեր ատեն բնական կարիք հոգալու դիւրութիւն ալ չկար։ Իմ անհախտ տեսութեանս հետեւանքէն զերծ մնացի շնորհիւ Արաբիս որ բռնի բանալ տուաւ բանտին դուռն և պահապանաց հսկողութեան ներքեւ գաւիթն կրցայ ելնել վայրկեան մի։ Տեսնելով որ կռնակս ամուրն էր, մոլեռանդք զգօնացան և սկսան ունկնդրել ինձ իբրեւ վարժապետի։ Հարցայ ո՞մա և նմա թէ ինչ ոճիրի համար բանտարկուած էր, իւրաքանչիւր ոք կ'արդարացունէր զանձն և դառնապէս կը գանգատէր կառավարութեան դէմ։ Ես բացատրեցի իրենց թէ ի՛նչ է ճշմարիտ կառավարութիւն, և հասկացուցի, որքան կարելի էր, թէ տեղական պաշտօնեայք չեն գլխաւոր պատասխանատուք իրաց անհանդուրժելի վիճակին, այլ թէ ամբողջ դրութիւնն ապականած էր թափէցադաթ։ Արաբս ամիսներէ ի վեր ի բանտի էր, ըստ օրինի պարտ էին յղել զնա Նահանգապետին, բայց անհոգ կեցեր էին։ Գրգռեցի զինքն որ եթէ աղերսագիր տալ չի կրնար, պէտք է կենդանի բարբառով բողոքէ։ ցերեկն, երբ զմեզ գաւիթն հանած էին օդ առնու, ի տես բարձր պաշտօնէից սկսաւ Արաբն աղաղակել, հայհոյել, բողոքել որ զինքն վալիին յղեն, զինուոր սոսիկանք դէմն ելան, զանոնք ևս նախատեց անօրինակ համարձակութեամբ։

Զնտանն անտանելի էր, և ես անշուշտ պիտի հիւանդանայի զի ոչ ուտել ինչ կրնայի և ոչ ի քուն լինիլ երբէք։ Բարբառողբարար չորրորդ օրն հանեցին զիս նուազ վատ բանտի մէջ դրին, ուր իմ կարծեցեալ մեղսակիցներս ալ գտայ, և սկսանք սրտապնդել զիրեար։

Չարմանալին այն է որ մեզ յայտնի չէր թէ ինչու բանտարկուած էինք, և վայրապար կը սպասէինք որ զվեզ ի դատ կոչէին, հարցաքննէին որպէս զի գիտնայինք թէ ինչ էր մեր յանցանք: Միայն թղթերու և գրոց գրաւումն թոյլ կուտայր մեզ գուշակել թէ զմեզ իբրեւ յեղափոխական կասկածեր էին:

Ես վստահ էի թէ ու է վտանգաւոր թուղթ կամ գիրք չունէի, բայց ո՞ր գիտէին զարձուածներ կը լինին և ինչ անիրաւութեան զոհ կուտան զիս՝ կը մտածէի և կը մտատանջուէի: Իմ յանցանքս ինձ անծանօթ կը մնայր, և սակայն պատեհութիւն ունէի ուրիշ բանտարկելոց յանցանքն իմանալու, և կառավարութեան ընթացքն ու ժողովրդի թշուառութիւնն ուսումնասիրելու:

Պայմագամն հրաման արձակած էր որ ոստիկանք ձերբակալեն ուր որ արբեցեալներ գտնեն: Խումբ խումբ արբեցեալներ կը բերէին ուրեմն ի բանտ, երեկոյններն: Իրօք արբեցեալ չէին ամենն, բայց ոստիկանք գտած էին զնոսա քաղաքին չրջակայքն, բացօդեայ վայրերում, ի խորախճանութեան: Ըմպողն ըմպելի կը բերուէին ի բանտ, այսինքն խմողներն ի բանտ խոկ գետ չխմուած օղիներն ալ պաշտօնէից, ոստիկանաց պետին և այլ բարձրագոյն գործիչներու, որք խումբ յօրինելով կը սկսէին ըմպել պատուական օղիներն մինչեւ առաւօտ: Երբեմն օգիտ տէրերէն մի քանի պատուաւորներ ալ կը կոչէին և իրենց խմբին մէջ կ'առնուին քաղաքավարութեամբ: Ինչ զարմանալի բան. քաղաքէն դուրս խմողներն իբրեւ յանցաւոր կը ձերբակալեն, և ապա նոյն այդ ձերբակալող պաշտօնեայք ինքնին կը սկսին արբենալ կառավարութեան պալատին մէջ, հետեւեալ օրն տուգանք և պաշխիշ առնելու իրաւութիւն ալ ի գործ դնելու պայմանաւ:

Այս գերիմաստ գայմագամ հրաման արած էր նաև որ գիշեր ժամանակ ոչ ոք փողոց ելնէ առանց լապտերի: Ամեն գիշեր ուրեմն շատ մարդ կը ձերբակալէին և կը բերէին ի բանտ: Ես շատ արգահատեցայ երկու թուրք ծերունի ոստայնանկներու վերայ որք ինձ պատմեցին թէ երեկոյեան մինչեւ ժամ 3 (ըստ թրքաց) գործած էին՝ ի չքաւորութենէ ստիպուած, և ի տուն դառնալու ատեն, չունե-

նալով լապտեր, վառած էին մոմ. ճամբան կարճ էր, բայց՝ դեռ տուն չհասած՝ հոգն չիջուցած էր ճրագներն: Եւ ահա այդ վայրկեանին ոստիկանք ձերբակալած էին խեղճերն: Այս սպիտակ ալիք, ոչ կէսվառուած մոմերն օգուտ ունէին զիրենք արձակելու համար, հարկ էր 3 դահեկան տուգանք վճարել: Ծերունեաց մին մասնաւոր ուժգնութեամբ կը դիմագրէր՝ առնելով թէ 3 դահեկան երկայն օրուան մի վաստակն է, ինչո՞ւ պիտի վատնէր զայն տարապարտուց: Ամեն կողմէ փորձառու բանտարկեալք, ես ալ անոնց հետ, կը յորդորէինք որ վճարէ տուգանքն և ելնէ բանտէն, բայց չանսաց. մնաց օր մի եւս ի բանտի, և ապա կակղնալով հատոյց 3 դահեկանն ու արձակումն ստացաւ: Այս մարդ, ինչպէս առ հասարակ բանտարկեալք, կ'անիծէին թուրք կառավարութիւնն իբրեւ անիրաւ, զեղծ, փտած. բայց մաղթանաց կամ անիծից քան զամենայն սրտաբուխ կարծեմ այն թուրքն արձակեց հոգւոյն խորէն որ մի և միջ տուրքն մի և միջ տարուամ մէջ չորրորդ ամգամ վճարելով բանտէն արձակուած պահուն, — ես ակաւատես եղայ — ձեռքերն վերյեկինս բարձրացոյց և աղաղակեց — Ալլահ, աս ի՞նչ անտանելի կառավարութիւն է, ո՞հ, Տէր', ողորմեա', և թող չուտով գայ ո՞վ որ պիտի գայ մեզ փրկել, թող լինի Մուկոֆն, թող լինի ինկիլիզն:

«Ի՞նչ կը դրդնջես, խալի՛մ, պոռացին պաշտօնեայք, դարձի՛ր ի բանտ:» Եւ պարզամիտ թուրքն դարձուցին ի բանտ որ ապաշխարէ այս մատնչական մաղթանքին համար: Հետեւեալ օրն իւր բարեկամներէն մին 5 մէճիտիլէի կաշառք տալով, յանգէտս բանտարկելոյն, ստացաւ նորա ազատութիւնն: Կարժէ որ յիշեմ թէ այս հարստահարեալ թուրքն, աննման վերոյիշեալ երկու ծերունեաց, հարուստ մարդ մ'էր:

մնացեալն յաջորդ թուով

Իսմայիլ Ասիմ Պէյ անունով թուրք երիտասարդ մի Յունիս 23ին հասած է ի նիւ Եորք իբրեւ օսմանեան փոխ-հիւպատոս:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ

Ա. Ի ՌՈՒՍԻԱ

Հայկական խնդրոյն իրականութիւնն ու կարեւորութիւնն այնպիսի իրողութիւնք են որոց համոզուած եմ նոյն իսկ երկրին մէջ խնդիրն խնամով ուսումնասիրելով: Թուրքիա է այն տէրութիւն որ ուղղակի պիտի չաճի այս խնդրոյն գործնական լուծմամբն: . . . Անոնք որ Ռուսիոյ սահմանակից Հայ գաւառաց ճշմարիտ վիճակին տեղեակ են, դժուարաւ կրնան ուրանալ թէ անդ կայ այնպիսի կացութիւն մի որ ռուսական նոր միջամտութիւն մի կրնայ հրաւիրել, և ոչ ալ կրնան ասել թէ անհանդարտութիւնն պատահական իմորման արդիւնք է փոխանակ բուն մարմնոյն կենսական խորին պայմաններէն ծագած լինելու: Կուսակցութիւն մի կայ ոչ միայն ի Թուրքիա այլ և այս երկրին մէջ (յԱնգղիա), որք խնդրոյն կոյր կը ձեւանան, և որ շատ վտանգաւոր ախտանիշ մ'է, այն իսկ է թէ անոնք որ այս կոյր միտումն կը քաջալերեն հաճելի մարդիկ կը լինին ի Կ. Պոլիս: Անգղիոյ մէջ Թրքաց բարեկամներ կան որք պարտին ողբալ այս հակամիտութիւնն և այն քաղաքականութիւնն ևս զոր յառաջ տանելու հաշուեալ է: Նոքա գիտեն թէ Սուլթանի իշխանութեան տակ հզօրացոյն և յուսափայլ ցեղերուն (որք լաւ կրնան պահ պանել իրենց անհատական գոյութիւնն՝ հպատակ մնալով հանդերձ) զարգացումն միայն կարող է փրկել պետութիւնն անկումէ: Իբրև կողմանէ գիտեն նոքա թէ տարբեր քաղաքականութեան մի հետեւելու անխուսափելի հետեւութիւնն պիտի լինի ռուսական աշխարհակալութեան անդրադոյն ստրածումն յԱսիա:

Հայկական խնդիրն յոյժ անկատար կերպով հասկացուած է Անգլիոյ մէջ: Անոնք որ հասկանալ կը կարծեն, կը մտածեն թէ Թրքական զեղծ վարչութեան խնդիր մ'է, և թէ մահմետականք ալ բերիստոնէից հետ կը հարստահարուին: Ի՞նչ է Հ. խնդրոյն պատմութիւնն: Հայք, նախ, իրենց դատն պաշտօնապէս Եւրոպիոյ առջեւ դրին Պէրլինի վեհաժողովոյն մէջ, 1878ին: Առաջարկեցին որ Հայաստան ինքնօրէն լինի, սակայն չերեւիր թէ յստակ

լուծումում ունէին այն գործնական դժուարութեանց որոց պիտի հանդիպէր իրենց վարչական ծրագիրն: Պէրլինի Դաշնագրին մէջ յօդուած մի մուծուեցաւ, որ, եթէ ու է բան կը նշանակէ, պէտք է առնուի իբրեւ ազդարարութիւն մի Հայոց որ երթան տուն և հաստատեն իրենց փաստըն: Անմիջապէս յետ այդորիկ, Անգլիա կարող հիւպատոսներ յղեց ի Փոքր Ասիա, որք հրահանգ ունէին իրաց վիճակն և բարեկարգութեանց միջոցներ տեղեկագրել: Պէտք է խոստովանիլ թէ Հայք մեծ անտարբերութեամբ ծառայեցին մեր դեսպանին՝ Հայթայթելով սխալեցուցիչ վիճակագրութիւններ, և կերեւի թէ երբէք իրական վստահութիւն չներշնչեցին նմա իրենց դատին ողջութեան նկատմամբ: Իբրեւ հետեւանք, ոչ մի որոշ յառակագիծ դրուեցաւ Դրան առջեւ, և, որ աւելի կարեւորն է, ոչ մի որոշ քաղաքականութիւն բերուեցաւ ի միտս մեր դեսպանին կամ նորա պաշտօնակցացն՝ որք ստորագրող տէրութիւններն կը ներկայացունէին: (Մեր դեսպան Կոչըն գրեց թէ Ներսէս պատրիարքի նպատակն՝ բարեկարգութեանց ծրագրի մասին՝ այնքան տարտամ է որ շատ օգուտ չի կրնար քաղուիլ լուծելի խնդիրն լուսաբանելու համար: (Պլիու Պուք, Թուրքիա № 6, 1881, երես 16):

Անգլիոյ գործունէութիւնն ի Փոքր Ասիա, և յոռի վարչութեան տեղեկագրութիւնք որք ամեն կողմէ կը տեղային Բ. Դրան վերայ, թուի թէ դող հանեցին ոչ միայն Թուրքիոյ այլ և եւրոպական տէրութեանց սիրտն, և միայն մէկ բառ մի պէտք եղաւ իշխան Պիսմարքի կողմանէ որպէս զի Հայկական բարեկարգութեանց ամբողջ խնդիրն ջուրն ձգուէր*:

Հայաստանի մէջ իմ նորաւարձ ուղեւորութեանս ատեն, որ ընդարձակ սահմանի վերայ եղաւ, պարունակելով թէ ռուսական թէ Թրքական երկիր, ինչ ինչ մասնաւոր խնդիրներ ունէի յուշի զորս պիտի ջանամ բանաձեւել հետեւեալ կերպով. Ի՞նչ է Հայաստան: Այլով բանիւ, ինչ է տարածութիւնն՝ այն երկրաբաժնին

*Տես Լորա Կրէնվիլի հեռագիրն 1881 Փետր. 10 թուակիր «Գերման կառավարութեան կողմէն յարուցուած առարկութեան պատճառաւ՝ Մ. Կոչըն հրահանգ չպիտի ընդունի Հայկական խնդիրն յառաջ մղելու ի դարձին ի Կ. Պոլիս»:

որում կուտամք այս անուն, և զոր կը համարիմք յատկանշեալ մասնաւոր պատմական և ժամանակակից անհատականութեամբ: Իբրեւ հարկաւոր նախարան ուսումնասիրութեան խնդրոյն ի Թուրքիա, ինչ ընդունակութիւն և բնաւորութիւն ցուցած են Հայք այն հայկական գաւառում որ Ռուսիոյ հպատակ է, և թէ, իբրեւ կարեւոր բայց ստորագրաւ խնդիր, ինչ աստիճան յաջողութիւն ունեցած է կրնամք ասել ռուսական տիրապետութիւնն ի Հայաստան: Թրքական սահմանին մէջ և «Հայաստանի գաւառաց մէջ» կայ արդեօք շրջան մի որ ուրիշ գաւառներէ տարբեր տնօրինութիւն պահանջել կարենայ, և եթէ կայ, ինչ են սահմանք այդ երկրաբաժնին և ինչ է բաղադրութիւնն ժողովրդեան որ կը բնակի անդ: Այս հարցերու առաջին երկուքին ունիմ պատասխան տալ ներկայ և յաջորդ թերթերովս, և ահա կը սկսիմ հակիրճ բայց հարկաւոր քննութիւն մ'անելով աշխարհագրական տեսակետով:

Հայաստան ի հիւսիսոյ և ի հարաւոյ ունի աշխարհագրական քաջորոշ սահման: Լեռնադաշտք որոց ընդհանուր ուղղութիւնն է յարեւմտից դէպ յարեւել, յաջորդական քայլերով և յամր աստիճաններով կը բարձրանան դէպ յիւր թէ հիւսիսային յամակագիծն և թէ ի հարաւային: Հարաւային շղթայն Տաւրոսականն է, իսկ հիւսիսային-արեւելեանն Փոքր Կովկաս կը կոչուի երբեմն: Հարաւային սահմանէն վար ալ աստիճանաւոր էջով երկիրն կը խոնարհի մինչեւ Միջագետքի դաշտերն: Յարեւմտից և յարեւելից սահմանագիծն կամայական միայն կրնայ լինիլ, ըստ որում Հնդկաստանի դաշտերէն մինչեւ ի Միջերկրական ծովն կը տարածի շարունակօրէն բարձր լեռնադաշտն: Աւելի օգտակար կը լինի նշանակել այն մասնաւոր դիմագծերն զորս հայ լեռնադաշտին երկայն շարքն կրնայ ներկայացունել և որ կրնայ զգեցունել զնա որոշիչ հանգամանօք և իւրուրոյն անհատականութեամբ: Նորա բարձրութիւնն ի վեր քան զյարակից երկիրներն, նորա կարկառունն դէպ հիւսիս ընդ մէջ Կասպից ծովուն և Միջերկրականին, ընդարձակ չափն այն երկրաբանական գործողութեանց զորս Բնութիւնն կատարած է նորա վերայ, և հզօր գետերն որք նորա ծոցէն աղբերացած՝

կերպարան կուտան շրջակայ երկրաց—դոքա են ահա իւր փաստք անհատական գոյութեան: Ի Թուրքիա, հայ լեռնադաշտին բարձրագոյն մասն կ'իյնայ ի հարաւոյ Կարնոյ, և երբ ես ձմեռնային ճանապարհով ուղեւորեցայ ի Մշոյ ցկարին՝ ինուսի դաշտն կտրելով՝ 4500էն ց5000 ոտք բարձրութեան վերայ ընթացայ իբր 50 մղոն տեղ, մինչև ելայ ի սահմանս խոր ձեան որ 7000 ոտք բարձրութեան վերայ կը գտնուի:

Պէտք է, երկրին ահագին բարձրութենէն, այն իսալ ենթադրութիւնն հետեցունել թէ կլիմայն, ամբողջ առած, անհանդուրժելի խստութիւն ունի: Կարնոյ դաշտն 6000 ոտք բարձր է, և սակայն ջերմաչափն Դեկտեմբերի մէջ 27 աստիճան Յարէնհայթ նշանակեց միջին հաշուով, կէս օրէն առաջ՝ ժամ 10ին: Երբ ի ըսկզբան Նոյեմբերի հասայ ի վան, ծառերն դեռ թափած չէին իրենց ոսկեգոյն տերեւներն և հնդկական ամառուան բովանդակ փառքն կը սփռէին պարտիզաւետ քաղաքին ջրաչափ պողոտաներուն վերայ: Արաքսի հովտին մէջ բամպակ, Մշոյ դաշտում ծխախոտ և խաղող, և բոլոր լեռնադաշտին վերայ հացահատիկք լաւ կը յաջողին: Լեռնային մթնոլորտին առողջարար բնութիւնն, հրաբխական հողին յուռթկութիւնն, մշակելի երկրին ընդարձակութիւնն և ջրոց առատութիւնն որ անձրեւի տեղ կրնայ բռնել, բնատուր օժիտներ են որոց ու է երկիր կրնայ նախանձիլ:

Աւելի քան ու է այլ ցեղեր որք կը բնակին հոն՝ Հայք իրենց անհատականութիւնն դրոշմած են այդ ընդարձակ և վեհապանծ լեռնադաշտին երեսին: Հազիւ կարելի է գտնել հեռաւոր հովիտ կամ մենաւոր կղզեակ մի որ իրեն չքաշէ երկրպագող ուխտաւորաց խմբեր՝ թագաւորութեան հին դարուց յիշատակներն կենդանի պահելով:

Ի սէր յստակութեան, ինչպէս և յարմարութեան, նախ երկրին այն բաժնին բնակչաց վերայ պիտի խօսիմ որ Զարին կայսրութեան մէջ կ'իյնայ: Վիճակագրութեան այն սքանչելի հատորն զոր տը Սէտլից և Անդրկովկասեան վիճակագրական մասնախումբն հրատարակեցին անցեալ տարի հրամանաւ կառավարութեան, կ'օգնէ ինձ որոշելու ժողովրդեան զանազան տարրներն և աւելի ամուր խորիսխի

վերայ հիմնելու այն ընդհանուր եզրակացութիւններն զորս ուղեւորական փորձառութիւնս կը թելադրէ ինձ: Բովանդակ Անդրկովկասի բնակչաց թիւն 4,700,900 է, որոյ մէկ հինգերորդն, այն է իբր 965,000 Հայ են: Հայ տարրին կարեւորութիւնն պէտք է չափել նորա թուական զօրութենէն. այլ Հայ ժողովրդեան համարախութենէն՝ բաղդատմամբ այն ցեղերուն որոց մէջ կը բնակին: Միայն թաթարք և Վրացիք աւելի բազմաթիւ են քան Հայերն, սակայն կրօնական դառն հակակրօնութիւնն Շիազ և Սիւննի թաթարաց, և ռուսական եկեղեցւոյ յարեալ լինելն վրացւոց՝ զրկած է զիրենք զգացման հասարակաց կապէն որ ցեղային հպարտութեան գիտակցութենէ կը ծնի: Իսկ եթէ առնուիք այն բուն Հայկական լեռնադաշտի ռուսական մասն միայն, զոր յարակից քարտէզին մէջ նշանակած եմ, և որ 22,000 քառակուսի մղոն տարածութիւն ունի, կը գտնեմք հետեւեալ թիւերն.

Հայք.....	519,238
Թաթար	306,310
Քուրդ	68,864
Յոյն.....	47,763
Թուրք.....	46,985
Վրացի	31,102
Ռուս	28,844
Գարափափախ.....	27,247
Այլք	19,357
Գումար	1,095,710

Այս թիւերն կը ցուցնեն թէ վայրն ուր Հայք քան զամենայն բազմաթիւ են, է այն հարուստ երկիրն զոր կը կտրէ Արփա ջայ՝ խառնուելու համար Արաքսի միջին ընթացքին: Անդ է Աղէքսանդրոպոլի արդի բերդն ու քաղաքն, որոյ բնակիչք գրեթէ բոլորովին Հայք են. և սակաւ մի հարաւոյ, Անի քաղաքին մնացորդք կը գտնուին, որոյ լքեալ վառարանն դեռ կը վկայէ իրենց թագաւորաց ճաշակին և ճոխութեան: Ախալքալաքի շրջակայ բարձր դաշտն ի հիւսիսոյ ծածկուած է Հայ գիւղերով, մինչ Արաքսի հովիտն ի հարաւոյ, Քակիզմանէ ցերեւան, մանաւանդ էջմիածնայ գաւառակն, կը պարունակէ բազում Հայ ժողովուրդ: Նոր Պայազիտի աւանն ու գաւառակն, Սեւանայ լճին արեւմտեան ափանց վերայ, մեծ մասամբ Հայաբնակ է: Յետ Հայոց, լեռնադաշտին քան զամենայն շատուոր բնակիչք են Թա-

թարք, որք Պարսից սահմանագլխէն ըսկսեալ դէպ ի վեր Երասխայ հովտին մէջ տարածուած են, և իրենց բնակութեամբ կը ծածկեն լեռնադաշտին արեւելեան մասն և բոլոր Գարապաղն: Այդ մասին մէջ նոքա Շիազ աղանդին կը վերաբերին, և ոչ միայն Պարսից կրօնին հաղորդ են այլ և բաւական պարսիկ արիւն խառնուած ունին յերակս: Շատ ժամանակ շէ դեռ երբ տակաւին պարսկական խանութիւն մի կը կազմէին նոքա և պարսիկ սէրաւարներով կը կառավարուէին: Արուեստով ծեփիչ, որմնադիր և առու շինող են, և շատ ալ մանր վաճառականութիւն կ'անեն և պարտիզպանութիւն: Վաշկատուն լինելէ դադարած են: Միւս կողմանէ տխուր է տեսնել թէ որքան քիչ կօգտին դաստիարակութեան այն պատուական պատեհութենէն զոր կ'ընծայէ ռուս կառավարութիւնն: Երեւանի (ուր այնքան թաթար կայ որքան Հայ) բարձր վարժարանին մէջ, 260 ուսանողաց միայն 18ն թաթար են:

Ռուս Սահմանին մէջ ինկող Քուրդք դեռ թողած չեն իրենց թափառելու սովորութիւնն: Նոցա գլխաւոր արօտավայրքն են թրքական սահմանագլխոյն վերայ և ի Գարապաղ: Բոլոր Անդրկովկասի մէջ նոցա թիւն 100,000 կը համարուի:

Յոյներն ունին մի քանի գիւղեր. իմ տեսածներս բարեկեցիկ էին: Թրքերէն կը խօսէին և ռուսերէն կը սովորին, և դիւրագործ հանճարի շնորհիւ կարող են ազգայնութիւն փոխել ինչպէս մեք օդ կը փոխեմք: Քաջ հանքագործ և երկրաչափ են: Վրացիք սակաւաթիւ են և Կուրի հովտին մէջ կը գտնուին: Շատ տեղ այնքան խառնուած են թրքաց հետ որ գրեթէ իրենք զիրենք թուրք կոչել կ'ուզեն, թէ իրենք զիրենք թուրք կոչուին: Թուրքք մի և են արդարն միւսիւման: Թուրքք մի այն Կարսի դաւառին մէջ կը գտնուին, ուր են նաև խառնազգի գարափափախներ, և ըրն: Բուն Ռուսք թուով աննշան են, և իբրեւ աղանդաւորներ վառնուած եկած են այս կողմն—Մոլոքեան և Տիւշուպոյեան կը կոչուին: Նոցա կենցաղավարութիւնն աւելի բարձր է, քարաշէն աղուսը տուներ ունին, և երկրագործութեան լաւագոյն գործիներ: Միևնոյն ատեն, ռուս գիւղացին բնութեան կշռոյն մէջ այնքան բարձր գիրք չունի որ, մինչ իսկ եթէ բազմաթիւ լինէր, տիրէր միւս տարերաց և ձուլէր ըստ իւր կամաց: Իւր տրամադրութիւն կրաւորական է և գաղափարականքն ցած:

Հ. Յ. Կ. Լինձ

ՀԱՅՔ

ՀԱՆՐԱՊԵՏ ԿԻՍԵՄՍԵԱՅ

ԽՄԲԱԳԻՐ Մ.Ս. ԳԱՐԻԻԷԼԵԱՆ

Հասցե

Editor of "HAIK" 139 West 22nd St.,
New York.

U. S. America.

Կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգրին է

ամեն երկրաց համար

երկու տալեր կամ տասն ֆրանք

կանխիկ

ԵՆՍԻԵԲԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ(°)

ՀԱՄԱՌՈՑ ՎԷՊ ՄԻ, ԻՐԱԿԱՆ ԴԷՊԻԻ

ՎՐԱՅ ՀԻՄՆԵԱԼ

(Շար. և վերջ, տես նախորդ թիւն)

Մեծ շնորհակալութիւն տու Կիսեմսե-
ճի Կիկոյի իւր տուած կարեւոր տեղեկու-
թեանը համար և զգալով որ գործը յիրա-
ւի ծանր կերպարանք կառնուր սկսեցի
անկից վերջ մեծ զգուշութիւն ընել, չի
թողնել որ ոչ ոք մտնէ սենեակս առանց
կանխապէս տեղեկանալու թէ ով էր այ-
ցելուն:

Անցան գացին մի քանի շաբաթ առանց
բան մի պատահելու և խորհելով որ ալ
վտանգ չկար, սկսեցի անհոգ լինիլ և մոռ-
նալ այս զարմանալի դէպքն:

Երեկոյ մի երբ Բերայի կողմն, Մօս-
կով Սէրայէ աւելի վեր, կառավարու-
թեան պարտիզու մօտերն, առանձին կանց-
նէի այլեայլ խորհուրդներով զբաղեալ և
իմ քայլեր դէպ ի տուն ուղղած, յանկարծ
մութ տեղ մի, ետեւս մէկն օձիկէս գա-
զանաբարոյ կերպիւ բռնելով, վայրենական
ձայնիւ մի պոռաց, «Շիմաի սէնդի էլիմէ
կէշիրաիմ քեա'ֆիր, եա լիրալարը, եա
սէնդին ճանունա զըյարում», և ահագին
Չէրքէզի զամա մի սկսաւ շարժել աչքե-
րուս առջև: Սարսափահար այսպէս անա-

կնկալ, անկարող էի տեսնել թէ ով էր,
սակայն իւր ձայն ինձ ճանանչ էր, ես լը-
սած էի զայն շատ անգամ, սօֆթային
ձայնն էր, ուստի անմիջապէս զարմացու-
մէս զգաստանալով, առաջին խորհուրդս
եղաւ գտնել ճամբայ մի այս գազանը խա-
ղաղեցունելու, դէթ՝ պահ մի, մինչև որ
անձի մի պատահիմ օգնութիւն խնդրե-
լու: Միտքս ինկաւ յանկարծ որ գտնուած
տեղւոյս կողմնակի փողոցի մէջ Հայու մի
սրճարան կար, ուր Հայ բեռնակիրներ և
բանւորներ կ'անցունէին իրենց երե-
կոյեան ժամեր. եթէ ինձի ազատելու հը-
նար կար, ինքզինքս այդ սրճարանը նետե-
լըս էր:

Այս խորհուրդներն մտածելն և վըճ-
ռելն մէկ ակնթարթի գործ էր, և ուստի
անմիջապէս ու համոզիչ ձայնով ըսի գա-
զանին, «Հօճա էֆէնտի, հոգի», չի վայ-
լեր ձեզ նման ազնուական կրօնականի բա-
րեխնամ թագաւորի պողոտային անտեղի
շարժումներ ընել, եկուր ինձ հետ սա նեղ
փողոցն մտնենք և ինչ որ է ձեր պահան-
ջը կատարեմ:» Շատ աղուէս կը կարծէր
սօֆթան ինքզինքն, փողոցի անկիւնէն
նայեցաւ որ աւելի մութ էր հոն և իւր
վայրենի դիտաւորութեանն յարմարագոյն
ուստի հաւանութիւն տուաւ, մտանք նեղ
փողոցն՝ տակաւին նա իմ օձիկէս բռնած:

Յիսուն կանգունի չափ հեռու էինք
Հայկական Սրճարանէն: Ես անոյշ լեզուաւ
այնպէս կը ցուցնէի թէ, ահաւասիկ գու-
մարը ինչ որ է հաշիւ թող ընէ և ես ալ
պիտի վճարեմ, տանելով զինքն յառաջ, և
միանգամայն մէկ ձեռքովս ալ գրպանիս
մէջէն դրամի դիւթիչ հնչիւնը հանելով:
Այժմ չորս հինգ կանգուն հազիւ մնացած
էր սրճարանին:

Սոյն Սրճարանն որոյ վերայ իմ յոյս
դրած էի, ինչպէս որ ըսի, այդ նեղ փո-
ղոցի վրայ աղօտ լոյսով լուսաւորեալ գետ-
նայարկ սենեակ մ'էր, ուր բաւական հայ
բեռնակիրներ գրեթէ բոլորն ալ Վանի
գիւղերէն իրենց ծանր գործերէն ազա-
տած, ընթրիքէ վերջ կը զբօսնուին: Ու-
մանք «Իսքամպուլ» և ոմանք «տօմինա»
կը խաղային, ուրիշներ «նարթիլէ» կամ
չըպուլս կը ծխէին. իսկ մէկ քանիներ ալ
կռուի բռնուած էին:

Որչափաւոր ազան խիստ կերպիւ կը
յանդիմանէր երիտասարդ Կրպօն, ըսելով
«ժօ' էլ հերիք է քու սրած ջահելութիւ

նըդ, քիչ մ'էլ անցնի սիւննաթ ալլիս
թաճիկ տըլլիս, ի՞նչ կը գովես հտչափ
էլ շուները:»

«Խապա ինչ անիմ» պատասխան տը-
ռաւ Կրպօն «էնոնց սայայէն է հացս եմ
վաստկել, քո խայերդ ինչ անել են ինձ:»

«Բերանդ էլ պտպանձի հա՛», պոռաց
անդիէն տէտէ Մրտո, որ շատ օրեր տե-
սած ծերուկ մ'էր, Հիմի էլ սա նարքիէն
ղափայտ կը խբեմ հա՛, կորի՛ր սըկի դու
խայ չիս, քրդի թոխում իս ինչ իս:»

«Քօր քօրա՝ շուռդ աէմիշ» կրկնեց Կր-
պօն, «քո ինչ ըլլիլդ է բէլլիսիզ անցեալ
օր թաճիկների մօտ նամագ ղըլմիշ կանէ-
իր:»

«Մօ ախըլուզ, ես էնի շախատան
թախլիթ արի, երկու մաշիթիչէ կորզե-
ցի» յարեց ծերունին, «միէղայ, միէղայ
Տէր ողորմեա՛յ, դու սաթանայ ես ծօ
տղայ:»

«էյ ձէնդ թող կարի, դու ինձ մի
խառնվիր, դու չէիր Քօր օղլու ձէապօ
Քիւրդն սպաննողն, հաչան բերանդ նորին
բանաս, կ'երթամ, վալլախ խապար կիտամ
հէօքիւմաթ, իմ սօն ձէվապն աս է» ըսաւ
Կրպօ բարկութեամբ:

«Մօ բերանդ քեզ քաշի, չափղո՛ւն,
հիմի սա չըփուխն վրադ կը կոտրիմ» ան-
դիէն պոռաց մի ուրիշ. «ծօ դու Ֆէօս
վասակ տըլլիս, քէշքի հազարումէկ
քուրդ էշէք ջէննաթուն խաւեր նա...»

Կռիւն քանի կերթար կը սաստկանար,
այնպէս որ սկսան ոտքի ելնել և իրարու
վրայ յարձակիլ:

Ահա ճիշդ այս պահուն էր որ ես ալ
Սրճարանին մէկ կանգուն մնացած էի,
Սօֆթան օձիկէ՛ս բռնած, խորհեցայ որ
ժամանակն եկած էր օգնութեան կանչել,
ո՛հ եթէ գիտնայի թէ ինչ տեղի կունենար
Սրճարանին մէջ չափաի համարձակէի-
բայց պոռացի բարձրաձայն, «Հայ եղբայր-
ներ, շուտով օգնութեան հասէք, տաճիկ
Սօֆթան գիս պիտի մեռցունէ:»

Երբ այս աղաղակ լսեցին, այն Հայեր
որ նոյն պահուն իրարու կողորդի պլլուած
էին, ամենն ալ, հայատեաց Կրպօն միա-
տեղ, ձգեցին իրենց կռիւ, չըպուխ ու
թօմինա և փութանակի դուրս թափեցան
բարձրաձայն կանչելով, «Սօֆթայու քէ-
բէրաի՛րըն, թութուն շու քօբակ օղլու
քօբակի և այլ ուրիշ աւելի զօրաւոր մա-
կանուններով յարձակեցան գազանին վը-

րայ:

Հարկ չէ զրուցել որ ինչպէս գիտէք
մինչեւ այն ատեն Սօֆթան իմ օձիկէն
բռնած էր, բայց այժմ ես Սօֆթայի օձի-
կէ բռնած էի, մինչեւ որ հայ եղբարց
հաստաբազուկ բռնցի ուժգին հարուածոց
տակ՝ վայնասուն պոռայով Սօֆթան փա-
խաւ և մութ փողոցներու մէջ աներեւոյթ
եղաւ:

Մինչև այսօր այլ ևս տեսած չունիմ
Սօֆթան: Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Պրուքլին, Մայս 19, 1894

ԵՄԵՐԻԿԵՅԻ ՀԱՅՈՑ

ՊԵՏԻՒՆ

Ամերիկայի մէջ ամեն գաղթականու-
թիւն միևնոյն պատիւն չի վայելեր: Զինա-
ցիք պատուոյ սանդղին ստորնագոյն աս-
տիճանին վերայ են, և նոցա մուտքն յԱ-
մերիկա արգելուած է օրինօք: Եթէ չա-
փազանց մեծ ծախք չպահանջէր, յառա-
ջագոյն ներս ընդունուածներն կառավա-
րութեան կողմէն ետ պիտի յղուէին: Ի-
տալացիք և Ռուսիայէն եկող Հրէայք ալ
անպատիւ են: Ֆուանսացիք, Զուիցերիա-
ցիք, Շուէտք և Նորվեկիացիք բաւական
յարգելի են: Գերմանացիք քան զամե-
նայն աւելի պատուաւոր են:

Հայերն ալ սկսած են ճանչուիլ՝ մա-
նաւանդ ուր որ տարիներէ ի վեր կը գտ-
նուին բաւական նշմարելի թուով: Հե-
տաքրքրական է գիտնալ թէ մեր ցեղն
ինչ աստիճանի դիրք կը բռնէ կամ բռ-
նելու կը միտի Ամերիկացւոց համարման
մէջ: Հայոց վերայ նոքա գաղափար կը
կազմեն կա՛մ անձնական յարաբերու-
թեամբ կա՛մ լրագրաց մէջ նոցա մասին
կարդալով: Ի՞նչ կը տեսնեն և ի՞նչ կը
կարդան: Գործարանաց մէջ, ուր Հայոց
100ին 90ն կը տեսնուին, մերայինք առաջ-
նակարդ գործաւորներ չեն, վասն զի երկ-
րին լեզուին շատ անկատար ծանօթութիւն
ունին և արհեստներուն ալ դժուարագոյն
մասանց վարժ չեն. իրենց շարժապճարն
ալ շատ չափաւոր է: Ծնմարիտ է թէ մե-
րազնեայց մէջ կը դտնուին ճարտար և

բարձրագոյն կարգի գործաւորք ալ, բայց առ այժմ չստուար չեն այդպիսիք, և միջակաշուով հայ գործաւորք աւելի անճարտար բանւորներու դասին կը պատկանին: Այս մասին զարմանալու տեղի չկայ: Տաճկաստան ճարտար արհեստից և քաղաքակրթութեան մէջ յոյժ յետնեալ է, և հետեւապէս անկէ եկող հայ կամ այլ ժողովուրդ չի կրնար Գերմանիոյ և Ֆրանսայի նման ազգաց զաւակներուն հետ հաւասար դիրք բռնել:

Միջակ կամ ստորին թոշակաւ գոհ լինելու ստիպուած հայ գործաւորք բնական է որ ստիպուին նաև շատ խնայող կեանք վարել, 3—4 հոգի մէկ սենեակի մէջ բռնակիլ, իրենք իրենց խոհարարն և երբեմն լուացարարն իսկ լինիլ: Կենցաղավարութեան այդ պայմաններն երբ ծանուցուին Ամերիկացւոց, ի հարկէ գէշ տպաւորութիւն կը գործեն:

Բայց Հայոց պատուոյն վնասող յաւելտ կամածին պատճառներ ալ կան: Տեղ տեղ հայ գործաւորք ոմանք փորձեցին գործադլուարաց տեղն լնուլ, յորմէ յառաջ եկաւ Հայոց հրապարակային հաւածանքն ու նախատինքն թէ՛ ի փողոցի թէ՛ ի լրագիրս: Մեր այդ հայրենակիցք կըրնան հարցնել թէ միթէ իրաւունք չունին գործելու ո՛ւր որ գործ գտնել կարենան, և թէ զիրենք հալածողներն անիրաւ չէին: Կը պատասխանեմք թէ իրենք իրաւունք ունէին և իրենց արգելք լինելու յանդգնող գործադլուարք բողոքովին անիրաւ էին: Գործադլուարք իրենց դարձիւ կոշտութեան և զգուելի բռնաւորութեան ապացոյց կուտան երբ այդպիսի ցոյցերով ուրիշներու գործելու ազատութիւնն կը բռնաբարեն: Ի վերայ այս ամենայնի մեք կը խրատեմք մեր հայրենակիցներն որ երբէք այդ բանն նորէն չանեն, երբէք գործադլուարաց տեղն չաշխատին—իրենց աշխատելու ազատութենէն, իրաւունքէն՝ այդ պարագայից մէջ՝ հրաժարին: Մարդս շատ բան անելու իրաւունք ունի, բայց և այնպէս ետ կը կենայ երբ հետեւանքն կը հաշուէ: Այս խնդրոյ տակ գտնուող պարագային մէջ հետեւանքն ամենուն յայտնի է: Գործադլուարք կը գրգռուին, կը կատաղին, և գործադող համարելով Հայերը՝ նոցա վերայ յարձակում կը գործեն Այդպէս կը ծագի կռիւ և աղմուկ, ամբոխ կը կազմուի, ոմանք կը վիրաւոր-

ուին, թերթերն ալ արձագանք կուտան Հայոց աննպաստ եղանակներով: Ի՞նչ չափ կը լինին մերայինք. քիչ օրերէն կը ստիպուին գործն թողուլ, այնպէս որ միայն շնչին վարձք մի ստացած կը լինին և այն ի գին ահագին նեղութեան և նախատանաց:

Անցեալներ թրոյի մէջ մեր հայրենակիցներէն ոմանք ուզած են օձիկի գործարանաց մէջ աշխատիլ՝ ուր միայն աղջկունք կ'աշխատին: Օրիորդք բողբոջած են այս խրամատութեան դէմ և իրենց բողբոջ լսելի եղած է. Հայն կամ Հայերն ի բաց յղուած են: Թրոյի թերթք այդ առթիւ աննպաստ դիտողութիւններ արած են Հայոց նկատմամբ, և մին Ջինացւոց հաւասար դատած է զնոսա: Յայտմ եւս մերայինք կրնան հարցնել թէ ի՞նչ անիրաւութիւն գործած եղան, և ինչո՞ւ պէտք է նախատուէին: Դարձեալ կը պատասխանեմք թէ խնդիրն իրաւանց և անիրաւութեան վերայ չէ, այլ պատշաճից և վեհանձնութեան վերայ: Օձիկ չինել շատ ոյժ պահանջող գործ չէ, և ի թրոյ հագարուոր աղջկունք գնացած են այլ և այլ քաղաքներէ այդ գործ անելու: Ամերիկայի արու գործաւորք ձեռնպահ կը մընան այդ գործարաններէն, որքան ալ որ անգործ և նեղեալ գտնուին: Ուստի և երբ Հայեր աժան, կէս վճարով, աշխատիլ զիջանին և գործարանապետն զիրենք ներս առնու, ոչ միայն գործաւորութիւնը այլ և հանրային կարծիքն առ հասարակ կը դատապարտէ Հայերն իբրեւ տկար և փափուկ սեռին հացին վնասողներ: Այրա՛ն դէմ պէտք է մրցի, և երբ հայ մարդըն ամերիկացի աղջկան հետ մրցելու զիջանի, արհամարհելի կը լինի իբրեւ տկար և անպէտ կամ անազնիւ մարդ:

Տարակոյս չկայ թէ այսպիսի անվայել փորձութեան մէջ խնող Հայերն յոյժ սակուաթիւ են, բայց և այնպէս այդքանն բաւական է Հայոց դէմ ընդհանուր կերպով զԱմերիկացիս նախապաշարելու:

Ուրեմն կաղաչեմք որ մեր սիրելի եղբարք այսուհետեւ բնաւ երբէք գործադուլ եղած գործարանաց մէջ աշխատիլ չփորձեն եթէ զուր տեղ իրենց և ազգին պատիւն արատաւորել չեն ուզեր:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

Նիւ Եորքի Հանգանակութիւնն .

Մեծ. Տեարք—Գ. Գասպարեան 5 տոլար, Տր. Տատրեան 10 տ., Տր. Իշխանեան 10 տ., Ա. Թ. 10 տ., Համակրող ոմն 5 տ., Եփրատ 3 տ., Ա. Եէմէնճեան, Եղբարք Շ., Ա. Թօփուզեան, և Բ. Մանկէրեան 2ական Մ. Նաճարեան 3 տ., Գրիգոր, Հայքամուլ, Աղէքսանդր, Մ. Բիւրքճեան, Մ. Մ., Խ. Բ. մի մի տոլար, Ս., Ս. Օ., Ժ. Աճոնքեան, և Հայ Ոմն 50ական սէնթ, Սերուր 25 սէնթ Հայ Ոմն 25 սէնթ : Գումարն է 62 տոլար 50 սէնթ :

Լինի Հանգանակութիւն .

Մեծ. Տեարք— Ոմն 10 տոլար, ոմն 5, Կ. Ս., Խ. Խ., Գ. Պ., Ս. Մ. և Ոմն 3ական տ. Բ. Ա., Ա. Պ., Ա. Պ., Բ. Կ., Մ. Պ., Վ. Պ. և Ոմն 2ական տ. Բ. Վ. Ա., Զ. Կ., Մ. Զ., Բ. Ս., Գ. Ա., Զ. Մ. և Փ. Մ., մի մի տ. Մ. Գ., Մ. Պ. և Պ. Պ. 50ական սէնթ : Գումարն է 52 տոլար 50 սէնթ :

Այլ և այլ կողմերէ Հանգանակութիւն

Մեծ. Տեարք— Մի Հայ եկեղեցական (Ասիայէն) 10 տոլար, Բ. Պ. Պ. և Գ. Մ. Դ. (Հըտսընէն) մի մի տ., Ե. Մ. Արսլանեան (Սփրինկֆիլդէն), Փասդոր Շահվէլէտ, Մ. Պէյլիքճի (Գոլէճ Փոյնթէն), և Հայուհի ոմն (Պրուքլինէն) 2ական տոլար, Հայրենասէր ոմն (Եռնեըն Սիթիէն) 5., ի ձեռն Տիար Գ. Մ. ի (Նիւ Պրիթէյնէն) Հաւաքուած 2 տ. 25 տ., ի ձեռն Տիար Մ. Կ. Պ. ի (Փրովիտէնսէն) 1 տ., ի ձեռն Տիար Ն. Կ. Թէրզեանի (Ուոնսօքթէն) Հաւաքուած 4 տ., ի ձեռն Տիար Զ. ի (Թրոյէն) Հաւաքուած 5. : Գումարն է 37 տոլար 25 սէնթ :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Դատաւոր Կէյնըր Տատրեան-Թէոտորեան դատին նկատմամբ որոշ Համոզման մի Հառած է որով՝ Տր. Թէոտորեանի դէմ injunction, վճռած է, այսինքն մածոնի վաճառումն դադարեցունելու հրաման տուած է : Սոյն դատաւորի կարծեօքն՝ Տր. Տատրեան իրաւունք ունի մոծունն մենավաճառելու ոչ այնու զի մածունն ինքն է յօրինէր այլ վասն զի ինքն ի վա-

ճառ դրած է զայն իբրեւ դեղային յատկութիւններ ունեցող ըմպելիք և «Մածուն» անունով որ Ամերիկայի ժողովրդին Համար աննշանակ բառ մ'է ճիշդ որպէս թէ նոր ստեղծուած բառ մի լինէր :

—Հայր Սարաճեան այժմ կը բնակի ի Նիւ Եորք և մտադնր է աստուածաբանական եպիսկոպոսական Դպրոցին մէջ ուսանելի գալ տարի : Ամեն կիրակի կրօնական պաշտօն կը կատարէ 39րդ փողոցի և 7րդ պողոտայի անկեան Մատարն մէջ :

Յունիս 3ի կիրակի օրն մկրտեց Մեծ. Տիար Պ. Բակոբեանի զաւակն : Պաշտաման և արարողութեանն ներկայ էր ստուար թիւ մի Հայ գաղթականաց :

—Ն. Ժ. Նահանգի Փաթէրսըն քաղաքին մէջ մի քանի գործազուրկներ դատաւարտութիւն կրեցին դատարանէն . մին 50տոլար տուգանք վճարեց՝ վասն զի գործն ձգել չուզող ոստայնանկի մի վերայ յարձակում արած էր : Ուրիշներ ևս փոքրագոյն գումարներ վճարեցին նոյնպիսի յանցանքի Համար .

—Մեծ. Տիար Գրիգոր Սափուրզեան, որ բազում տարիներէ ի վեր Նիւ Եորքի մէջ Հաստատուած էր իբրեւ ճարտար ոստայնանկ գործաւոր, անցեալ օր ամուսնացաւ մի Հայ օրիորդի Հետ որուն նշանուած էր թղթակցութեամբ աստի ի Թուրքիա : Շընորհաւորելով նորապսակ ամուլից ամուսնութիւնն՝ կը մաղթեմք նոյն բարեբաստիկ օրհնութիւնն մեր ուրիշ ամուսնացեալս :

—Ամուսնութիւնն օրինականօրէն թոյլ տրուած է երիտասարդաց և աղջկանց Հետեւեալ Հասակներու Համար . ի Գերմանիա 18 եւ 16, յԱւստրիա՝ 14, 14, ի Սպանիա՝ 14, 12, ի Ֆրանսա՝ 18, 15, ի Յունաստան՝ 14, 12, ի Հունգարիա՝ 18, 14, ի Ռուսիա՝ 18, 15 : Ուրեմն ի Ֆրանսա և ի Ռուսիա պսակ չի կրնար կատարուիլ այն աղջկան վերայ որ 15 տարեկան չէ : Սպանիոյ և Յունաստանի մէջ 12 տարեկան աղջիկն կրնայ կարգուիլ : Թուրքիա արդէն ծանօթ է այդ մասին իբրեւ մին ի յետնագունից :

1873ին Կ. Պոլսոյ Հայոց մէջ 505 նշան-տուութիւն և 423 պսակ եղած է: 1883ին՝ 401 նշանտուութիւն և 357 պսակ: 1893ին՝ 503 նշանտուութիւն և 458 պսակ:

—Սէյլամէն Տիար Մ. գրելով մեզ կը դանդատի Մր. Հիւքոքի դէմ, որ, ըստ մեր թղթակցին, սխալ տեղեկութիւններ իրաւայ Հայոց նկատմամբ:

—Քալիֆոռնիայէն կը գրէ Մեծ. Տ. Ն. «Չէ՛, բարեկամ, պէտք չէ աչք գոցել: Եթէ պիտի գտնուին այնչափ հասկացող անձինք որք զնահատեն ձեր թերթին ուղղութիւնը ու արժէքը և իւրեանց բոլոր ճիշդին աշխատին կանգուն պահել զՀայք, լա՛ւ, ապա թէ ոչ մի ձգէք ձեր որբութիւն խոզերու առջեւ:»

—Մեծ. Տ. Արսլան կը գրէ Սիւրինկֆիլտէն. «Ուրախ պիտի ըլլանք տեսնել թէ արդար եւ հարկաւոր քննադատութիւններ կ'ըլլան, հոգ չէ թէ ոմանց այնչափ հաճելի չպիտի երեւին. մեր դատողութեամբը շորս տարուան միջոցին ՀԱՅԲի քննադատութիւնք ճշմարիտ և անկեղծ են:»

—Արժ. Փառղոր Ծահվէլէտ կը գրէ Միսուրիէն. «ՀԱՅԲի անաշառ քննադատութիւնները ի՛հ համակրութեան արժանացած են. ոսկայն որովհետեւ մեր ազգին մեծամասնութիւնը մանուկ լինելով դեռ ճանաչել կարող չէ այս տեսակ քննադատութեան օգտակարութիւնն և դէպ ի լաւը յառաջ մղող զօրութիւնն, ասոր համար լաւ է, ինչպէս դուք որոշած էք, քննադատութիւնը քիչ մի մեղմացնել կամ ժամանակի մի համար բոլորովին դադրեցնել...»:

—Մեծ. Տ. Խաչուսեան կը գրէ. «ՀԱՅԲը կարգում եմ մեծ հաճութեամբ և հետաքրքրութեամբ: Յուսով եմ թէ Ամերիկայի Հայերը կարող պիտի լինին պահել մի օրկան այս երկրում, որ թէ անհրաժեշտ է և թէ օգտակար: Սիրում եմ ՀԱՅԲի բռնած ուղղութիւնը ազգային խնդիրների վերաբերմամբ:»

—Մի հայ եկեղեցական, գրելով Եւրոպայէն առ «Հայք»ի օգնող Յաննախումբըն, կ'առէ. «Ես ինքս միշտ համակիր ե-

ղած լինելով այդ թերթին զգօն և ողջամիտ մտածութեանց և միանգամայն իւր մատենագրական կատարելութեանց, որ չատ սակաւ թերթերու մէջ կը տեսնուին. յանձն կառնում առ այժմ անգղիական սակի մի խոստանալ:»

—Առատօրէն նպաստող թղթակից մի հետեւեալ սողեռն ուղղած է Յաննախումբին. «Ինձի կ'երեւի թէ գրել արդարութեամբ ամեն ատեն աղէկ է: Ոմանք կրնան ցաւիլ և ոմանք հակառակիլ, սակայն օր կուգայ որ անոնք ալ կը հասկնան ՀԱՅԲի արդար և ուղիղ հոգին: Եթէ կայ հայ լրագիր մի որ կ'առաջնորդէ ազատութեան այն ալ ՀԱՅԲ լրագիրն է: Նաեւ կ'ուզեմ գիտնալ թէ դուք այդ մի քանի պատ. անձինքդ նո՞ր սկսած էք ՀԱՅԲի օգնութեան համար աշխատիլ թէ առաջուց մասնախումբ մի կազմած էիք: Թէ որ մնայուն ըլլաք, մի յուսահատիք, մենք ալ յետ այսու ձեռքերնէս եկածը ետ չպիտի թողունք:»

—1894 Յունվար 1էն մինչև Յունիս 26, իբր վեցամսեայ ընթացքի մէջ, Միացեալ Նահանգներէն արտածուած ոսկւոյ գումարն է իբր 63 միլիոն տոլար, ներածուածն՝ իբր 9 և կիսու, այնպէս որ զուտ արտածութիւնն 57,482,629 տոլար է: 1893ին, նոյն միջոցում արտածեալ ոսկւոյ գումարն էր աւելի ահագին, այսինքն 63,327,622 տոլար: Այս մեծաքանակ ոսկւոյ արտածութեան պատճառն է ելմտական անվտանգ վիճակն, որով անգլիացի դրամատեարք կը քաշեն իրենց դրամոց մէկ մասն այս երկրէն:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

—Զուիցերիոյ ընկերվարականք և նոցա պարզամիտ համակրողք 50,000 ստորագրութեամբ օրէնք մի առաջարկեցին որ պետութիւնն պարտաւոր լինի ամեն արու քաղաքացւոյ դործ հայթայթել: Ըստ տրամադրութեան երկրին «համանադրութեան» քուէի ենթարկուեցաւ րէֆէրանտումով, և 300,000 քուէով ընդդէմ 85,000ի մերժուեցաւ:

—Զուիցերիոյ հասարակ ժողովրդի մեծամասնութիւնն բաւական զգօն է ընկեր-

վարական հրապուրիչ գաղափարաց ներքին այլանդակութիւնն ըմբռնելու համար :

—Թուրք կառավարութիւնն բոլոր վաճառելի ջորիներն գնած է ի կրետէ, ի Զմիւռնիա և ի Պէյրութ, և յղած է Եէմէն, ուր պիտի ծառայեն Ասիր ապստամբ արաբաց դէմ :

—Կրետէի մէջ նորէն խռովութիւնք տեղի ունեցեր են և թուրք կառավարութիւնն զօրք յղած է հոն :

—Մոսկուայէն հեռագրուած անհաւանական լուր մի կայ թերթերուն մէջ իբր թէ Կովկասի մէջ անկախութեան համար ապստամբութեան պատրաստութիւններ, վազմամթերք երևան հանած է կառավարութիւնն :

Նորագոյն հեռագիր մ'ալ կ'ասէ թէ Ռուս ոստիկանութիւնն պայթուցիկ նիւթ գտած է Զարին կառախումբն օդն հանելու նպատակաւ գետեղուած —Գործ ոչնչականաց :

—ԱՐԱ անգլիերէն ամսաթերթին Ապրիլի թիւին մէջ կը կարդամք հետեւեալը—

«Մեր եղբայրակիցն ՀԱՅՔ շատ բանաւոր տեսութիւն մի կ'անէ Հայկական ինդրոյն քաղաքական կացութեան մասին՝ յարաբերութեամբ Անգլիոյ և Ռուսիոյ : Կրնամք նմա հետ համաձայն չլինիլ ամեն կետի վերայ, սակայն սրտագին հաճութեամբ կը տեսնեմք ինդրոյն մերինէն առաւել կամ նուազ տարբեր տեսակետէ քննուիլն. տարբեր տեսութեանց միմեանց առջնութեւր գրուելովն է որ ճշմարտութիւնըն կրնայ երեւան բերուիլ. կը յուսամք որ եթէ հարկաւոր դռնեմք իրմէ տարբերիլ, պիտի նայի մեր տարբերութեանց վերայ այն ազատական ոգով զոր ինքն իսկ բացատրեց մի քանի թիւ յառաջագոյն :»

Այս յառաջաբանէն յետոյ մեր յարգելի պաշտօնակից կ'անցնի ի նպատակ Ռուսիոյ անեւ ինչ ինչ դիտողութիւններ Գալով մեր ընկերակցականաց կ'ասէ թէ նոցա սրտաբան անհաճոյ է իրեն մինչև ի սոսկում, բայց և այնպէս նոքա խնդիրն կենդանի պահելու կը ծառայեն և նախախնամութիւնն կրնայ այդ առերեւոյթ շա-

րէն ալ բարիք հանել :

Նոյն ամսաթերթն, Մայիսի թուոյն մէջ, կը յայտարարէ թէ համաժողով է Ազգային հոգեբանութեան մէջ տրուած Հայկական բնաւորութեան նկարագրին : Նաեւ կը ծանուցանէ թէ ինքն ոչ մէկ կուսակցութեան թեր կ'ենէ, այլ անկողմնակալօրէն կը թագմանէ կտորներ ամեն Հայ թերթէ առանց նկատելու թէ Մարտիկեան կամ Հայքեան կամ Հնչակեան կամ ինչ է : «Ոչ այս ինչ թերթի և ոչ իսկ այն ինչ կուսակցութեան աշխատանաց այլ ամենուն միացեալ ջանից կարօտ է Հայաստան, և մինչև անգամ ամենից միացեալ ճշգունքն հազիւ հազ կը զօրեն շարժել զմեր ժողովուրդն : Ուրեմն ի՞նչ նպատակաւ իրարու դէմ պիտի մարտնչուիք ի քննութեանց...» Կը մտադրեմք որ մեր մեծայարգ պաշտօնակցին այս խմբագրութիւնն իսկ ի ինչի իսկ և խօսաց :

—Լոնտոնի Աստուածաշունչի Ընկերութիւնն արագաժամով մամուլ մ'է ընծայեր էջմիածնի տպարանին : Մամուլն ամենալաւ տեսակէն է : —Էջմիածնում, մինչև այժմ, յօգուտ սովելոց ստացուած փողերու գումարն կը հասնի 30,000 ռուպլիի : —Էրզրումի մէջ կազմուած է մի փոքրիկ մասնաժողով, սովելոց օգնելու համար : —Թագաւոր Կայսրն բարձրագոյն հաւանութեամբ թոյլ տուեր է Ռուսահայոց մէջ հանգանակութիւն անել յօգուտ Թրքահայ գաղթականաց և սովեալներուն : (ՄՇԱԿ)

—Պուլկարիոյ Ռուսնուք քաղաքն այցելող «Ուղեւորն» կը գրէ մեզ թէ շատ գոհ եղեր է նոյն քաղաքին Հայոց կրթական ջանքերն տեսնելով, նոցա երկուեւ վարժարանն, ընթերցարանն, բարեխնամ Հայրերն՝ զՏէր Կարապետ աւագ քահանայն և զՏէր Ղեւոնդ երէցն : Գաղթականութիւնն 200 անէ կը բաղկանայ :

Թերթիս մամուլոյ տակ դրուելու պահուն իմացանք թէ Մեծ Տիար Տիգրան Գ. Վարժապետեան, վաճառական ի Ռուսիայէն, Յանձնախմբին յղած է 10 տուար ի նպատակ ՀԱՅՔի հանդերձ քաջակերպական նամակաւ :

ԳԱՌՆԻԿ ՏԵՕՔՄԷՃԵԱՆ

Յանձնակատար-գործակալ

ամեն տեսակ

Գրական և տպգարական արտադրութեանց
և ևն. ևն.

Հաստատեալ 1890 ի Ռուսճուր

ՆՈՐ ՀՐԵՏԵՐԵԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՒԱՆԱՆՔ

Ի Մ. Ս. ԳԱՐԻԷԼԵԱՆԷ

«Հայք» էն ինչ ինչ փոփոխութեամբ բնականաբար ուսումնասիրութիւնն կը ծախուի 10 սէնթի: Հինգ օրինակի գին կանխիկ վճարողն 10 օրինակ կը ստանայ այսինքն հինգ օրինակ ալ ձրի:

ԱՅՍԻՆ ԳԻՐՔ

Ապրիլ 1էն մինչև Յունիս 30, 1894, հետեւեալ գրքերն կը վաճառուին զեղջեալ գներով որպէս ի ստորև—


«Հայք» ի Ա. տարին 1 տոլար կամ 5 ֆր.
 " Բ. " 1 " " "
 " Գ. " 1 " " "

ԱՐՈՒԵՍ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ 50 սէնթ կամ 2 ֆր. ու կէս:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԻ 10 սէնթ կամ 50 սանթիմ:

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, որոյ գինն է 10 սէնթ և ԱԶԳԱՅԻՆ ԴԱՒԱՆԱՆՔ որոյ ևս գինն է 10 սէնթ, եթէ 5 օրինակի գինն մէկէն կանխիկ վճարէ ոք (այսինքն 50 սէնթ կամ 2 ֆր. ու կէս), կը ստանայ ուրիշ հինգ օրինակ ալ ձրի:

«Պրիմեան Հայրիկ» և «Հայ Բողոքականութեան Անցեալն ու Ապագայն» աշխատութիւններէն սակաւաթիւ օրինակներ միայն մնացած լինելով, ոովորական գներով կը վաճառուին:



A 249

191 FRONT Փողոց, Worcester, MASS.

Ստեփան Փ. Բրուտեանս, պատիւ ունիմ ծանուցանելու իմին ազգայիններուս թէ առանձինն խանութ մ'ունեցած եմ քանի մը շաբաթներէ ի վեր և կը պահեմ ամեն տեսակ ժամացոյցներ զուտ ոսկի, ոսկեզօծ և արծաթ. նաև ամեն տեսակ ոսկեզօծ շղթաներ և ոսկի մատանիներ և որ ըստ կարգին. նաև ամեն կարգի խոշոր ժամացոյցներ թէ պատի և թէ բաֆիյար մար մօտս կը գտնուին, և կը վստահացունեմ թէ խիստ չափաւոր գներով կըրնամ վաճառել: Ազգայնոցս մասնաւոր զեղջ կ'ընեմ որեւէ ապրանաց համար որք մօտս կը գտնուին.

Նաև ամեն տեսակ ժամացոյցներ թէ ամերիկական և թէ եւրոպական կը նորոգեմ խիստ չափաւոր գներով և լաւադոյն կերպով և կերպաւորեմ մէկ տարի:

ՍՏԵՓԱՆ Փ. ԲՐՈՒՏԵԱՆ

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9th Փողոց

Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով: Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր:

կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեան նըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ ֆիլին Station E. (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ գիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

FRANCOIS FRENTZ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE. NEW YORK

27դ և 28դ փողոցաց միջև

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու

Նիւ Եորք

26դ և 27դ փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

ՅԱԿՈԲ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ ԵՂԲԱՐՔ

Յ. ԷՔԻ.ՉԵՆ

EKIZIAN BROTHERS

30 Eddy St.

Providence R. I.

Անցեալ տարուան Միացեալ Նահանգաց դէպի Եւրոպա մեր ունեցած ստակի փոխադրութեան համեմատութիւնն արդիւնաւոր ըլլալուն՝ ներկայիս կը խոստանամք որ ա՛լ աւելի զոչսղութիւններ աւնեմք։

Անոնք որ կը կտրօտին ստակի փոխադրութիւններ անեւ՝ դէպի Եւրոպա կամ Թուրքիոյ կողմերն, ամեն մէկ քաղաքի իրենց համեմատութեամբն կարգադրած ենք որ թէ մեր անձնական տուներու և թէ մասնաւոր գործակատարներու ընդունելութեան պայմանաւ փոխանակագրեր պիտի ծախենք գոհացուցիչ չնայով։

Այս նկատմամբ մեր հասցէին գրուած նամակներու մասնաւոր ուղադրութիւն անելով անմիջապէս պիտի պատասխանենք։

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան, բազում ձեւերով բայ՝ տրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գապարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՒՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊՍԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»-ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ հանրային ուղադրութիւնն աւելի զբաղեցունելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակառակ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։ Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21

դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէս կամ 5 ֆրանք։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ